ված նիստում, ինչպես նաև սոցիալիստական երկրների փիլիսոփայության և սոցիոլոգիայի ինստիտուտների դիրեկտորների միջազգային խորհրդակցության ժամանակ, որը տեղի է ունեցել 1970 թ. հունիսին, Զակոպանեում (Լեհաստան):

ԱՐԵՎԵԼԱԳԻՏՈՒԹՅԱՆ ՍԵԿՏՈՐ

Հ. Դ. ԻՆՃԻԿՅԱՆ

Արևելագիտության սեկտորի վարիչ,
պատմական գիտությունների թեկնածու

Հոկտեմբերյան հեղափոխության ազդեցությամբ իր զարթոնքն ապրող, իրենց հայրենիքի ազատության ու անկախության համար պայքարող և քաղաքական ակտիվ կյանքի ուղին բռնած Արևելքի ժողովուրդները վերջին կես դարում արժանացան ոչ միայն քաղաքական ու պետական գործիչների, այլև գիտնական-արևելագետների հատուկ ուշադրությանը:

Հայաստանում սովետական կարգերի հաստատումից անմիջապես հետո, 1920 թ. բացվում է Երևանի պետական համալսարանը, որտեղ նախատեսվում էր հիմնել նաև արևելագիտության ֆակուլտետ: Սակայն արևելագիտական առարկաների դասավանդումը սկսվում է միայն 1923-ից, իսկ 1934 թ. մտցրվում է արևելքի երկրների պատմության հատուկ դասընթաց: Հետագայում՝ 1940 թ. կազմակերպվում է արևելյան լեզուների և գրականության ամբիոնը, իսկ բանասիրական ֆակուլտետի կազմում ստեղծվում է արևելյան բաժին երկու հյուղով՝ պարսկերեն և արաբերեն լեզու և գրականություն: 1962 թ. մտցրվում են նաև թուրքերեն լեզուն ու գրականությունը:

Նախապատրաստական այդ միջոցառումները հնարավորություն տվեցին 1968 թ. սեպտեմբերի 1-ին բացել ինքնուրույն արևելագիտական ֆակուլտետ՝ երկու մասնագիտական ուղղություններով՝ Մերձավոր ու Միջին Արևելքի ժողովուրդների լեզու-գրականություն և պատմություն:

Կազմակերպական միջոցառումներին զուգահեռ Երևանի պետական համալսարանում կատարվում է լուրջ գիտահետազոտական և հրատարակչական աշխատանք: Լույս են տեսնում Հ. Աճառյանի Արմատական բառարանը, Հայոց լեզվի պատմությունը՝ պարսկական, ասորական, արաբական, թուրքական փոխառություններին նվիրված բաժիններով, լիակատար քերականությունը, որտեղ հարուստ նյութ կա իրանական և սեմական լեզուների մասին: Օտար աղբյուրները հայերի մասին մատենաշարով լույս են տեսնում Հ. Աճառյանի աշխատությունները Ֆիրդուսու և Իբն-ի-Բատուտայի մասին: Հրատարակվում են նրա պատրաստած վավերագրերը հայ-պարսկական հարաբերությունների մասին, պարսկերեն լեզվի ձեռնարկը, պարսկական հատընտիրը և այլ աշխատություններ:

Ակադեմիկոս Հ. Մանանդյանը լույս է ընծայում իր ֆունդամենտալ ուսումնասիրությունները՝ Հայ ժողովրդի ինքնական պատմություն, Հայաստանի քաղաքները և առևտուրը (կապված հին դարերում միջազգային առևտրի հետ), Ժողովրդական ապստամբությունները Հայաստանում արաբական տիրապետության դեմ, Հայաստանի պատմությունը թուրք-թաթարական արշավանքների շրջանում և այլ գործեր: Մեծ է նաև ակադեմիկոս Գ. Ղափանցյանի ներդրումը Հին Արևելքի պատմության ուսումնասիրման ասպարեզում:

Մեծավոր և Միջին Արևելքի երկրների վերաբերյալ բազմաթիվ արժեքավոր նյութեր են պարունակում ականավոր հայ պատմաբան Լեոյի (Առաքել Բաբախանյան) եռահատոր «Հայոց պատմությունը», «Խոջայական կապիտալը» և այլ աշխատությունները: Հանրապետությունում արևելագիտության զարգացմանը նպաստեց պրոֆ. Ռ. Աբրահամյանի, Հովհ. Հակոբյանի և շատ ուրիշների գործունեությունը: Այնուհետև այս ուղղությամբ զգալի աշխատանք կատարեցին պրոֆ. Է. Աղայանը՝ իր լեզվաբանական ուսումնասիրություններով, պատմաբան Տ. Հակոբյանը, լեզվաբան, արևելագիտական ֆակուլտետի դեկան Գ. Նալբանդյանը և շատ ուրիշ դասախոսներ: Համալսարանի ռեկտոր և արևելագիտության ամբիոնի վարիչ Մ. Ներսիսյանի ջանքերի շնորհիվ ներկայումս արևելագիտական աշխատանքները համալսարանում ստացել են առավել բարեհաջող ընթացք:

Միաժամանակ արևելագիտական ուսումնասիրություններ են կատարվել նաև ՍՍՀՄ գիտությունների ակադեմիայի հայկական ֆիլիալում (1935) 1943):

Արմֆանի տարիներին և ավելի ուշ շրջանում մշակված թեմաների շարքին են պատկանում արաբների տիրապետությանը, նրանց վարչաձևին, հարկային քաղաքականությանը, ժողովրդական ապստամբություններին (Բ. Առաքելյան, Հ. Նալբանդյան, Ա. Տեր-Ղևոնդյան), Կիլիկիայի պետությանը, մոնղոլների շրջանի պատմությանը (Գ. Միքայելյան, Ա. Գալստյան) թուրք և պարսիկ իշխանությունների դեմ հայ ազատագրական պայքարի դրվագներին նվիրված ուսումնասիրությունները (Վ. Մելիքսեթյան, Ա. Միրզոյան և ուրիշներ):

Արևելագիտական լուրջ ուսումնասիրությունների օջախ է Մեսրոպ Մաշտոցի անվան հին ձեռագրերի ինստիտուտը՝ աշխարհահռչակ Մատենադարանը: Նրա աշխատակիցների և գիտահետազոտական այլ հիմնարկությունների գիտնականների ջանքերով ընթերցողին են հանձնվել տարբեր լեզուներով հրատարակված բազմաթիվ պատմական աղբյուրներ, որոնցից թվարկենք մի քանիսը. Եղիշե «Վասն Վարդանանց և հայոց պատերազմին», Անանիա Շիրակացի «Տիեզերագիտություն», Արիստակես Լաստիվերտցի «Պատմություն», Կիրակոս Գանձակեցի «Պատմություն հայոց», Հովհաննես Կամենեցի «Պատմություն պատերազմին Խոթինու», Թամբուրի Հարություն «Արևելյան երաժշտության ձեռնարկ», Զաքարիա Քանաքեռցի «Պատմություն»: Մատենադարանում կատարված շնորհակալ աշխատանքի շնորհիվ լույս են տեսել ուսումնասիրություններ, որոնք նշանակալից ավանդ են մտցնում հայ արևելագիտության զարգացման մեջ[1]:

Գիտությունների ակադեմիայի հիմնադրումը (1943) նոր խթան հանդիսացավ նաև արևելագիտության զարգացման համար: 1954 թ. պատմության

---

1 *Լ. Ս. Խաչիկյան, ԺԴ դարի հայերեն ձեռագրերի հիշատակարաններ, 1950 թ., ԺԵ դարերի հայերեն ձեռագրերի հիշատակարաններ, երեք մասերով (1-ին՝ 1955 թ., 2-րդ՝ 1958 թ., 3-րդ՝ 1967 թ.), Փոքր Հայքի սոցիալական շարժումների պատմությունից, 1951 թ.։ Հ. Ս. Անասյան, Հայկական աղբյուրները Բյուզանդիայի անկման մասին, 1957 թ., Հայկական մատենագիտության Ե—ԺԸ դարերի, 1959 թ., 17-րդ դարի ազատագրական շարժումները Արևմտյան Հայաստանում, 1961 թ., Բ. Լ. Զուքասզյան, Հայ-իրանական դրական առնչություններ (5—18-րդ դդ.), 1963 թ., Ա. Շ. Մնացականյան, Ադվանից աշխարհի գրականության հարցերի շուրջը, 1968 թ.։*

ինստիտուտում կազմակերպվեց Մերձավոր և Միջին Արևելքի երկրների պատմությունն ու տնտեսությունն ուսումնասիրող խումբ: 1958 թ. մեր ժողովրդի պատմության մեջ առաջին անգամ ստեղծվեց արևելագիտական գիտահետազոտական կենտրոն՝ Հայկական ՍՍՀ գիտությունների ակադեմիայի արևելագիտության սեկտոր: Իր գոյության առաջին շրջանում սեկտորն ուներ ընդամենը 22 աշխատակից, որից 17-ը՝ գիտաշխատող: Հետագա տարիներին աշխատակիցների թիվը անեց ավելի քան երեք անգամ: Սեկտորը սկզբում կազմված էր երեք խմբերից՝ թուրքագիտական, իրանագիտական և արաբագիտական: 1959 թ. ստեղծվեց նաև հրատարակչության խումբը: Այնուհետև կազմակերպվեց գիտական ինֆորմացիայի խումբ:

Անցած 12 տարիների ընթացքում սեկտորը լույս է ընծայել ավելի քան 45 մենագրություններ, ուսումնասիրություններ, ժողովածուներ և 200-ից ավելի հոդվածներ՝ հանրապետական և միութենական գիտական հանդեսներում ու պարբերականներում: Առանձին հոդվածներ և շատ անուն գիրք լույս են տեսել արտասահմանում՝ օտար լեզուներով, իսկ 5 աշխատություններ հրատարակվել են Մոսկվայում:

Սեկտորի աշխատակիցների ուսումնասիրություններում բարձրացվել և մշակվել են մի շարք կարևոր պրոբլեմներ, որոնցից հիմնականները հետևյալներն են.

Արաբական երկրների ժողովուրդների հակաիմպերիալիստական պայքարը ազգային ինքնուրույնության և ազատագրության համար:

Սրիտթուրքական կառավարության քաղաքականության և գործունեության հիմնական գծերը: Ազգային հարցը Թուրքիայի և Իրանի պատմության առանձին էտապներում: Ագրարային հարցը Իրանում 19-րդ դարում:

Մերձավոր և Միջին Արևելքի երկրների միջազգային դրությունը և նրանց փոխհարաբերությունները հարևան երկրների հետ:

Քուրդ ժողովրդի ծագման խնդիրները և հրդական ժողովրդական բանահյուսությունը: Քուրդ ժողովրդի տնտեսական և կուլտուրական զարգացումը սովետական շրջանում:

Թուրքական և արաբական աղբյուրները Հայաստանի և հայերի մասին:

Հայկական աղբյուրները Իրանի և Հնդկաստանի մասին:

Պարսկական ժամանակակից գրականության մի շարք հարցեր:

Հայ ժողովրդի գրական և լեզվական առնչությունները հարևան ժողովուրդների հետ:

Արևելքի հայկական գաղութները և նրանց դերը տվյալ երկրի տնտեսական և քաղաքական կյանքում:

Հրատարակված գործերից հիշատակության արժանի են «Արևելագիտական ժողովածուները», որոնց 1-ին հատորը լույս տեսավ 1960 թ.: Այստեղ ամփոփ ձևով ներկայացված էին ուսումնասիրվող շրջանի երկրների պատմության, տնտեսության և մշակույթի, ինչպես նաև այդ երկրների արտաքին և ներքին քաղաքականության մի շարք ընդհանուր ու մասնակի հարցեր: «Արևելագիտական ժողովածուի» հաջորդ հատորը լույս տեսավ 1964 թ.: Այստեղ լուսաբանվել են Մերձավոր և Միջին Արևելքի ժողովուրդների անցյալի պատմության և ներկա ժամանակին վերաբերող խնդիրներ:

1967 թ. հիշյալ ժողովածուն սկսեց հրատարակվել «Մերձավոր և Միջին Արևելքի երկրներ և ժողովուրդներ» խորագրի տակ և այսուհետև ունենալու է թեմատիկ բնույթ:

Ժողովածուի 3-րդ հատորը նվիրված է սուրբական երկրների պրոբլեմներին: Վերջերս լույս տեսան ժողովածուի՝ Իրանին նվիրված 4-րդ և Թուրքիային նվիրված՝ 5-րդ հատորները: Քրդագիտության խնդիրներին է նվիրվելու 6-րդ հատորը: Մշակվել են Հոկտեմբերյան հեղափոխության և Վ. Ի. Լենինի գաղափարների ազդեցության հարցերը Մերձավոր և Միջին Արևելքի ազգային-ազատագրական ու դեմոկրատական շարժումների վրա: Այս խնդիրներին են նվիրվել աշխատությունների առանձին ժողովածու և բազմաթիվ հոդվածներ[2]:

Կենսագործելով իր առջև դրված հիմնական խնդիրներից մեկը, սեկտորը հրատարակել է «Թուրքական աղբյուրները Հայաստանի և հայերի մասին» բազմահատոր ժողովածուն: Այդ աշխատությանն հեղինակն է բազմավաստակ արևելագետ-թուրքագետ Ա. Խ. Սաֆրաստյանը[3]: Հայաստանի և հայերի, ինչպես նաև Անդրկովկասի մյուս ժողովուրդների մասին թուրք արխունական պատմագիրների գրքերից բարգմանաբար բերված նյութերն ընդգրկում են XVI—XVIII դդ. թուրքական պատմագրության կարևոր երկերը: Շուտով լույս կտեսնի վերջին՝ 4 հատորը, որը լրացնելու և հրատարակության պատրաստելու գործում մեծ ջանքեր է թափել թուրքագետ Դ. Սանթուրջյանը:

Անհրաժեշտ է նշել նաև Օսմանյան օրենքների ժողովածուն, որտեղ մեկնաբանվում են XVI—XVII դդ. Արևմտյան Հայաստանում կիրառվող օրենքները և տիրող սոցիալ-տնտեսական ու քաղաքական հարաբերությունները[4]:

«Օտար աղբյուրները» սերիայի կարևոր գործերից մեկն է Հակոբ Նալբանդյանի արաբական որոշ աղբյուրների գիտական թարգմանությունը և հրապարակումը[5]: Շուտով լույս կտեսնի սեկտորի աշխատակից Ա. Փաիազյանի «Էվլիա Չելեբիի «Ճիհաննուման» որպես Հայաստանի պատմության ուսումնասիրման աղբյուր» աշխատությունը, աղբյուրի բնագրի և թարգմանության հետ միասին. Ռ. Աբրահամյանի աշխատությունում՝ հայկական աղբյուրների հիման վրա տրվում են Հնդկաստանի պատմության և հնդիկ ժողովրդի ազատագրական պայքարի հետաքրքիր էջերը[6]:

Սեկտորի պլաններում առանձնակի տեղ է գրավում Թուրքիայի նոր և նորագույն պատմության ուսումնասիրությունը:

---

2 *Վ. Ի. Լենինը և Մերձավոր ու Միջին Արևելքի ժողովուրդների ազգային-ազատագրական պայքարը, 1969։ Հ. Մ. Ղազանյան, Հոկտեմբերյան սոցիալիստական մեծ հեղափոխությունը և ազգային-ազատագրական շարժումները Իրանում (1917—1921), 1957.* Е. К. Саркисян, Великая Октябрьская социалистическая революция и национально-освободительная борьба в Турции, 1958.

3 *Ա. Խ. Սաֆրաստյան, Թուրքական աղբյուրները Հայաստանի, հայերի և Անդրկովկասի մյուս ժողովուրդների մասին (հ. Ա.՝ 1961 թ., հ. Բ.՝ 1964 թ., հ. Գ.՝ 1967 թ.)։*

4 *Օսմանյան օրենքները Արևմտյան Հայաստանում (16—17-րդ դդ. կանոնամաններ), կազմ. Ա. Խ. Սաֆրաստյան և Մ. Կ. Զուլալյան, 1964։*

5 *Հ. Տ. Նալբանդյան, Արաբական աղբյուրները Հայաստանի և հարևան երկրների մասին, 1965։*

6 Р. А. Абрамян, Армянские источники XVIII века об Индии, 1968.

Ե. Սարգսյանի ծավալուն մենագրության մեջ լուսաբանվում է Օսմանյան կայսրության ներքին վիճակն առաջին համաշխարհային պատերազմի նախօրյակին, հատուկ քննարկվում է Թուրքիայի մասնակցությունն առաջին համաշխարհային պատերազմին՝ կենտրոնական պետությունների կազմում, դեպի Անդրկովկաս կատարած թուրքական ագրեսիայի դրդապատճառները և հետապնդած նպատակները, Անդրկովկասյան ժողովուրդների պայքարը թուրքական նվաճողների դեմ և այլ հարցեր[7]:

Արևմտահայության վիճակի, Թուրքիայի ներքին ու արտաքին քաղաքական մթնոլորտի (կապված հայկական հարցի հետ) պարզաբանման գործում չափազանց կարևոր նշանակություն ունի ակադ. Մ. Ներսիսյանի խմբագրությամբ լույս տեսած վաստաթղթերի և նյութերի ժողովածուն[8]: Զգալի է այն սվանքը, որ վերջերս արևելագիտության մեջ ներդրեցին հայ պատմաբանները՝ մեր ժողովրդի պատմության տարբեր շրջանների լուսաբանման հետ միասին տալով նաև Օսմանյան պետության սոցիալ-տնտեսական պայմանների, քաղաքականության և միջխարաբերությունների խորը և գիտական վերլուծությունը:

Գյուղացիական և հողային հարցի ուսումնասիրմանը նվիրված աշխատությունների թվին են պատկանում Հ. Եգանյանի հետազոտությունները[9]: Դրանցում վերլուծվում են հողատիրության և հողօգտագործման ձևերը XIX դ., հարկային սիստեմը, հողային ռենտան և գյուղացիության շահագործման եղանակները, ինչպես նաև օտար կապիտալի մուտքը գյուղատնտեսության մեջ և կապիտալիստական հարաբերությունների զարգացումը գյուղում: Հիշյալ խնդրի ուսումնասիրության համար չափազանց կարևոր են Հ. Փափազյանի՝ մատենադարանի նյութերի հիման վրա հրատարակած ժողովածուները[10]:

Ագրարային հարցին անդրադարձել են նաև Ե. Սարգսյանը[11], Դ. Ակոպովը և ուրիշներ:

Տնտեսական զարգացման օրինաչափություններին են վերաբերում Մերձավոր և Միջին Արևելքի երկրների նավթի պրոբլեմներին նվիրված մի շարք աշխատություններ և հոդվածներ[12], որոնցում ցույց է տրվում արաբ ժողովուրդների պայքարն իրենց տնտեսական անկախության համար և նրանց զարգացման հեռանկարները: Մյուս կողմից ուսումնասիրվել են իմպերիալիստական որոշ երկրների մոնոպոլիստական կապիտալի ներխուժումը Թուրքիա և Իրան,

---

7 Ե. Ղ. Սարգսյան, Օսմանյան կայսրության նվաճողական քաղաքականությունն Անդրկովկասում առաջին համաշխարհային պատերազմի նախօրյակին և պատերազմի տարիներին, 1962 (ռուսերեն), 1964 (հայերեն):

8 Геноцид армян в Османской империи. Сборник документов и материалов, под. ред. проф. М. Г. Нерсесяна, 1966.

9 Հ. Մ. Եգանյան, Ագրարային հարաբերությունները Իրանում XIX դարի առաջին կեսին, 1963, Ագրարային հարաբերությունները Իրանում XIX դարի երկրորդ կեսին, 1969, Գյուղացիության վիճակը ժամանակակից Իրանում, 1960:

10 Հ. Դ. Փափազյան, Կալվածագրեր, պր. 1, 1968, Մատենադարանի պարսկերեն վավերագրերը: Հրովարտակներ, հ. 1, 1956, հ. 2, 1959:

11 Ե. Ղ. Սարգսյան, Օսմանյան կայսրության ագրարային քաղաքականությունը Արևմտյան Հայաստանում, 1957:

12 Հ. Կ. Թրյան, Պայքար նավթի համար, 1957:

1967 թ. հիշյալ ժողովածուն սկսեց հրատարակվել «Մերձավոր և Միջին Արևելքի երկրներ և ժողովուրդներ» խորագրի տակ և այսուհետև ունենալու է թեմատիկ բնույթ:

Ժողովածուի 3-րդ հատորը նվիրված է արաբական երկրների պրոբլեմներին: Վերջերս լույս տեսան ժողովածուի՝ Իրանին նվիրված 4-րդ և Թուրքիային նվիրված՝ 5-րդ հատորները: Քրդագիտության խնդիրներին է նվիրվելու 6-րդ հատորը: Մշակվել են Հոկտեմբերյան հեղափոխության և Վ. Ի. Լենինի գաղափարների ազդեցության հարցերը Մերձավոր և Միջին Արևելքի ազգային-ազատագրական ու դեմոկրատական շարժումների վրա: Այս խնդիրներին են նվիրվել աշխատությունների առանձին ժողովածու և բազմաթիվ հոդվածներ[2]:

Կենսագործելով իր առջև դրված հիմնական խնդիրներից մեկը, սեկտորը հրատարակել է «Թուրքական աղբյուրները Հայաստանի և հայերի մասին» բազմահատոր ժողովածուն: Այդ աշխատության հեղինակն է բազմավաստակ արևելագետ-թուրքագետ Ա. Խ. Սաֆրաստյանը[3]: Հայաստանի և հայերի, ինչպես նաև Անդրկովկասի մյուս ժողովուրդների մասին թուրք արհունական պատմագիրների գրքերից թարգմանաբար բերված նյութերն ընդգրկում են XVI—XVIII դդ. թուրքական պատմագրության կարևոր երկերը: Շուտով լույս կտեսնի վերջին՝ 4 հատորը, որը լրացնելու և հրատարակության պատրաստելու գործում մեծ ջանքեր է թափել թուրքագետ Դ. Սանթուրյանը:

Անհրաժեշտ է նշել նաև Օսմանյան օրենքների ժողովածուն, որտեղ մեկնաբանվում են XVI—XVII դդ. Արևմտյան Հայաստանում կիրառվող օրենքները և տիրող սոցիալ-տնտեսական ու քաղաքական հարաբերությունները[4]:

«Օտար աղբյուրները» սերիայի կարևոր գործերից մեկն է Հակոբ Նալբանդյանի արաբական որոշ աղբյուրների գիտական թարգմանությունը և հրապարակումը[5]: Շուտով լույս կտեսնի սեկտորի աշխատակից Ա. Փավազյանի «Էվլիա Չելեբիի «Ջիհանենուման» որպես Հայաստանի պատմության ուսումնասիրման աղբյուր» աշխատությունը, աղբյուրի բնագրի և թարգմանության հետ միասին. Ռ. Աբրահամյանի աշխատությունում՝ հայկական աղբյուրների հիման վրա տրվում են Հնդկաստանի պատմության և նրա ժողովրդի ազատագրական պայքարի հետաքրքիր էջերը[6]:

Սեկտորի պլաններում առանձնակի տեղ է գրավում Թուրքիայի նոր և նորագույն պատմության ուսումնասիրությունը:

---

2 Վ. Ի. Լենինը և Մերձավոր ու Միջին Արևելքի ժողովուրդների ազգային-ազատագրական պայքարը, 1969։ Հ. Մ. Բգանյան, Հոկտեմբերյան սոցիալիստական մեծ հեղափոխությունը և ազգային-ազատագրական շարժումները Իրանում (1917—1921), 1957. Е. К. Саркисян, Великая Октябрьская социалистическая революция и национально-освободительная борьба в Турции, 1958.

3 Ա. Խ. Սաֆրաստյան, Թուրքական աղբյուրները Հայաստանի, հայերի և Անդրկովկասի մյուս ժողովուրդների մասին (հ. Ա.՝ 1961 թ., հ. Բ.՝ 1961 թ., հ. Գ.՝ 1967 թ.)։

4 Օսմանյան օրենքները Արևմտյան Հայաստանում (16—17-րդ դդ. կանոնադրություններ), կազմ. Ա. Խ. Սաֆրաստյան և Մ. Կ. Զուլալյան, 1964։

5 Հ. Տ. Նալբանդյան, Արաբական աղբյուրները Հայաստանի և հարևան երկրների մասին, 1965։

6 Р. А. Абрамян, Армянские источники XVIII века об Индии, 1968.

Ն. Սարգսյանի ծավալուն մենագրության մեջ լուսաբանվում է Օսմանյան կայսրության ներքին վինակն առաջին համաշխարհային պատերազմի նախօրյակին, հատուկ քննարկվում է Թուրքիայի մասնակցությունն առաջին համաշխարհային պատերազմին՝ կենտրոնական պետությունների կազմում, դեպի Անդրկովկաս կատարած թուրքական ագրեսիայի դրդապատճառները և հետապնդած նպատակները, Անդրկովկասյան ժողովուրդների պայքարը թուրքական նվաճողների դեմ և այլ հարցեր[7]:

Արևմտահայության վինակի, Թուրքիայի ներքին ու արտաքին քաղաքական մթնոլորտի (կապված հայկական հարցի հետ) պարզաբանման գործում չափազանց կարևոր նշանակություն ունի ակադ. Մ. Ներսիսյանի խմբագրությամբ լույս տեսած փաստաթղթերի և նյութերի ժողովածուն[8]: Զգալի է այն ավանդը, որ վերջերս արևելագիտության մեջ ներդրեցին հայ պատմաբանները՝ մեր ժողովրդի պատմության տարբեր շրջանների լուսաբանման հետ միասին տալով նաև Օսմանյան պետության սոցիալ-տնտեսական պայմանների, քաղաքականության և փոխհարաբերությունների խորը և գիտական վերլուծությունը:

Դյուգացիական և հողային հարցի ուսումնասիրմանը նվիրված աշխատությունների թվին են պատկանում Հ. Եգանյանի հետազոտություններ[9]: Դրանցում վերլուծվում են հողատիրության և հողօգտագործման ձևերը XIX դ., հարկային սիստեմը, հողային ռենտան և գյուղացիության շահագործման եղանակները, ինչպես նաև օտար կապիտալի մուտքը գյուղատնտեսության մեջ և կապիտալիստական հարաբերությունների զարգացումը գյուղում: Հիշյալ խնդրի ուսումնասիրության համար չափազանց կարևոր են Հ. Փափազյանի՝ մատենադարանի նյութերի հիման վրա հրատարակած ժողովածուները[10]:

Ագրարային հարցին անդրադարձել են նաև Ն. Սարգսյանը[11], Դ. Ակոպովը և ուրիշներ:

Տնտեսական զարգացման տրինաչափություններին են վերաբերում Մերձավոր և Միջին Արևելքի երկրների նավթի պրոբլեմներին նվիրված մի շարք աշխատություններ և հոդվածներ[12], որոնցում ցույց է տրվում արաբ ժողովուրդների պայքարն իրենց տնտեսական անկախության համար և նրանց զարգացման հեռանկարները: Մյուս կողմից ուսումնասիրվել են իմպերիալիստական որոշ երկրների մոնոպոլիստական կապիտալի ներխուժումը Թուրքիա և Իրան,

---

7 Ն. Ղ. Սարգսյան, Օսմանյան կայսրության նվաճողական քաղաքականությունն Անդրկովկասում առաջին համաշխարհային պատերազմի նախօրյակին և պատերազմի տարիներին, 1962 (ռուսերեն), 1964 (հայերեն)։

8 Геноцид армян в Османской империи. Сборник документов и материалов, под. ред. проф. М. Г. Нерсисяна, 1966.

9 Հ. Մ. Եգանյան, Ագրարային հարաբերությունները Իրանում XIX դարի առաջին կեսին, 1963, Ագրարային հարաբերությունները Իրանում XIX դարի երկրորդ կեսին, 1969, Գյուղացիության վիճակը ժամանակակից Իրանում, 1960։

10 Հ. Դ. Փափազյան, Կալվածագրեր, գր. 1, 1968, Մատենադարանի պարսկերեն վավերագրերը։ Հրովարտակներ, հ. 1, 1956, հ. 2, 1959։

11 Ն. Ղ. Սարգսյան, Օսմանյան կայսրության ագրարային քաղաքականությունը Արևմտյան Հայաստանում, 1957։

12 Հ. Կ. Թրյան, Պայքար նավթի համար, 1957։

վերջիններիս պայքարը տնտեսական ու քաղաքական անկախություն ձեռք բերելու համար[13]:

Ներքին քաղաքականության հարցերից հատկապես ուսումնասիրվում է ազգային քաղաքականությունը[14], ժողովուրդների ծագման և զարգացման խնդիրները և տրվում է դրանց պանթուրքական խեղաթյուրումների քննադատությունը[15]:

Սեկտորի աշխատակիցները լրջորեն զբաղվում են արաբական ժողովուրդների ազգային-ազատագրական շարժումների պատմությամբ: Ն. Հովհաննիսյանի մի շարք տարիների ուսումնասիրությունների հետևանք են վերջերս հրատարակված գրքերը՝ Իրաքի, Սիրիայի, Լիբանանի ազգային անկախության համար մղված պայքարի վերաբերյալ[16]: Կոլեկտիվ ջանքերի առաջին փորձի արդյունք են Սիրիայի նորագույն պատմության ակնարկները, որոնք շուտով կհանձնվեն տպագրության:

Հ. Թոփուզյանի գիրքը նվիրված է հայ առաջադեմ գործիչների և կազմակերպությունների օգնությանը արաբների ազատագրական պայքարին[17], իսկ վերջերս լույս տեսած Լ. Մանասերյանի գիրքը՝ Մարոկկոյի ժողովրդի ազատագրական պայքարին[18]:

Լույս են տեսել քուրդ ժողովրդի հեքիաթների երեք հատորները[19], որոնք բազմավաստակ քրդագետ Հաջիե Ջնդիի երկար տարիների աշխատանքի արդյունք են: Նա հրատարակել է նաև «Քրդական էպիկական երգեր» և «Հայ և քուրդ ժողովուրդների բարեկամության արտացոլումը բանահյուսության մեջ» աշխատությունները: Ամինե Ավդալի ուսումնասիրությունները նվիրված են ընտանիքի, գերդաստանի անդամների փոխհարաբերություններին, որոշ ավանդական սովորություններին և սոցիալիստական կարգերի պայմաններում նրանցում տեղի ունեցած փոփոխություններին[20]:

Գ. Ակոպովը ավարտել է «Ակնարկներ քրդերի ծագման պատմությունից» կապիտալ ուսումնասիրությունը, որը լույս կտեսնի առաջիկայում: Քրդագիտական այլ աշխատանքներից կարելի է նշել Շ. Մհոյանի[21], Խ. Չատոևի[22], Ջ. Ջալիլի[23] գործերը:

Միջազգային հարաբերությունները Մերձավոր ու Միջին Արևելքում լուսաբանող աշխատությունների թվին է պատկանում Բ. Բալայանի ուսումնասիրու-

---

13 А. С. Аветян, Германский империализм на Ближнем Востоке, М., 1966. *Ռ. Պ. Կոնդակչյան, Արևմտագերմանական մոնոպոլիաների ներխուժումը Թուրքիա, 1963:*

14 С. С. Аванесов, Положение национальных меньшинств в Турции, 1963.

15 *Ե. Ղ. Սարգսյան, Ռ. Գ. Սահակյան, Հայ ժողովրդի նոր շրջանի պատմության նենգափոխումը թուրք պատմագրության մեջ, 1963:*

16 *Ն. Հ. Հովհաննիսյան, Ազգային-ազատագրական պայքարը Իրաքում (1945—1963), 1964, Ազգային-ազատագրական պայքարը Լիբանանում (1939—1958), 1968,* Образование Сирийской республики, М., 1968.

17 *Օ. Խ. Թոփուզյան, Հայերի մասնակցությունը Սիրիայի և Լիբանանի ազգային-ազատագրական և դեմոկրատական շարժմանը, 1968:*

18 Л. П. Манасерян, Марокко в борьбе за независимость, Ереван, 1969.

19 *Քրդական ժողովրդական հեքիաթներ, հ. 1՝ 1961 թ., հ. 2՝ 1962 թ., հ. 3՝ 1969 թ.:*

20 *Ա. Ավդալ, Ազգակցական հարաբերությունները քրդերի մոտ, 1965:*

21 *Շ. Խ. Մհոյան, Քրդական ազգային-ազատագրական շարժումները Իրաքում երկրորդ համաշխարհային պատերազմից հետո, 1965:*

22 Х. М. Чатоев, Курды Советской Армении, Ереван, 1965.

23 Дж. Джалил, Восстание курдов в 1880 г., М., 1966.

թյուններ[24], որտեղ ցույց են տրված այդ երկրի արտաքին քաղաքականության բնորոշ կողմերը և ապացուցված է, որ 1813—1828 թթ. Իրանը հաճախ էր վարում ինքնուրույն արտաքին քաղաքական գիծ: Կարևոր միջազգային հարցեր են շոշափվում Ս. Ավանեսովի «Մերձավոր և Միջին Արևելքում ագրեսիվ խմբավորումների ստեղծման հարցի շուրջը», Ա. Բայրամյանի «Միջազգային դիվանագիտությունը և Ալեքսանդրեթի սանջակի հարցը 1936—1939 թթ.», Վ. Բայբուրդյանի «Նոր Ջուղայի հայ գաղութը և իրանա-եվրոպական տնտեսական ու քաղաքական հարաբերությունները 17-րդ դարում» և «Թուրք-իրանական հարաբերությունները 20-րդ դ. սկզբին», Ռ. Սահակյանի «Ֆրանս-թուրքական հարաբերությունները 1919—1923 թթ.» և այլ ուսումնասիրություններում:

Մերձավոր ու Միջին Արևելքի և սոցիալիստական երկրների, մասնավորապես Սովետական Միության փոխհարաբերությունները լուսաբանող աշխատությունների մեջ կարելի է նշել Ռ. Սահակյանի գիրքը Սովետա-թուրքական հարաբերությունների մասին[25], Ռ. Կոնդակչյանի գործը նվիրված Թուրքիայի տնտեսական և տնտեսական կապերին սոցիալիստական երկրների հետ և մի քանի հոդվածներ:

Մշակութային, լեզվական ու գրական փոխառություններին և փոխազդեցություններին են նվիրված մի շարք թեմաներ, որոնց մի մասը հրատարակվել է[26]:

Կազմվել են նաև երկու բառարան՝ արաբերեն-հայերեն[27] և պարսկերեն-հայերեն (կազմողներ Ա. Բուդաղյան, Օ. Արզումանյան և Վ. Բայբուրդյան): Համալսարանի հրատարակությամբ լույս է տեսել Ռ. Աբրահամյանի պահլավերեն-պարսկերեն-հայերեն-ռուսերեն-անգլերեն հինգ լեզվանի բառարանը:

Սեկտորի մի շարք աշխատակիցներ մասնակցել են ՍՍՀՄ ԳԱ Ասիայի ժողովուրդների ինստիտուտի՝ «Թուրքիայի նորագույն պատմություն» կոլեկտիվ աշխատության հրատարակությանը, «Ժամանակակից Թուրքիա» տեղեկատուին, «Թուրքական քաղաքական կուսակցություններն ու գործիչները» աշխատությանը և այլն:

Սովետական Հայաստանի արևելագետներն ակտիվ մասնակցություն են ցուցաբերել միջազգային և համամիութենական գիտական կոնգրեսներին, կոնֆերանսներին և նստաշրջաններին:

Տարեցտարի ընդլայնվում են հայ արևելագետների գիտական կապերը արտասահմանյան մի շարք երկրների արևելագիտական կենտրոնների, համալսարանների և առանձին գիտնականների հետ: Գիտական այդ կապերի ընդլայնումը մեծապես նպաստում է արևելագիտության զարգացմանը և գրաքիսխանությանը ու սեկտորի մասնագիտական գրադարանի հարստացմանը:

Սովետական Արևելքի հանրապետությունների մեջ Հայաստանը մեկն է, որտեղ առկա են մեծ քանակությամբ արևելյան՝ պարսկական, արաբական, թուրքական և այլ լեզուներով աղբյուրներ և գրականություն: Մյուս կողմից,

---

24 Б. П. Балаян, Международные отношения Ирана в 1813—1828 гг., 1967.

25 Ռ. Գ. Սահակյան, Սովետա-թուրքական հարաբերությունների պատմության հակագիտական լուսաբանումը ժամանակակից թուրք պատմագրության մեջ, 1964։

26 Ա. Բուդաղյան, Հ. Մովսիսյան, Լ. Նեխոյան, Սոցիալական մոտիվները ժամանակակից պարսկական արձակում, 1970։

27 Արաբերեն-հայերեն բառարան, կազմեցին Ս. Ջուլչյան և Սարգսյան, Բեյրութ, 1969։

սկսած XVIII դ. վերջից, Արևելքում լույս տեսնող մամուլը և պարբերականները հանդիսանում են. որոշ դեպքերում, եզակի աղբյուրներ արևելյան երկրների ու ժողովուրդների պատմության տարբեր ժամանակահատվածների վերաբերյալ: Պատկառելի թիվ են կազմում նաև արխիվային փաստաթղթերը, հիշողություններն ու նկարագրությունները, որոնք կատարել են Արևելքի երկրներում եղած կամ ծառայած առևտրականները, ուղղական գործիչները, դիվանագետները, թարգմանիչները և այլ հույ գործիչներ: Դիրեկտիվ օրգանների վերջերս կայացած որոշման մեջ նախատեսվում է սեկտորի բազայի վրա կազմակերպել արևելագիտության ինստիտուտ, որտեղ ուսումնասիրություններ կկատարվեն նաև Հին Արևելքի, միջին դարերի, բյուզանդագիտության ու կովկասագիտության վերաբերյալ և նորաստեղծ ինստիտուտը կունենա լրիվ արևելագիտական գիտահետազոտական հիմնարկի պրոֆիլ: Այս ամենը, անշուշտ, հնարավորություն կտան հայ արևելագետներին ընդլայնելու իրենց գործունեության ասպարեզը և կանգնելու սովետական արևելագիտության առաջավոր դիրքերում:

ՀՆԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԵՎ ԱԶԳԱԳՐՈՒԹՅԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ

Բ. Ն. ԱՌԱՔԵԼՅԱՆ
Հնագիտության և ազգագրության ինստիտուտի դիրեկտոր, ՀՍՍՀ ԳԱ թղթակից-անդամ

Հայկական ՍՍՀ գիտությունների ակադեմիայի հնագիտության և ազգագրության ինստիտուտի գիտահետազոտական աշխատանքների հիմնական բնագավառները երեքն են՝ Հայաստանի հնագիտությունը, ազգագրությունը և բանահյուսությունը:

Նշված բնագավառներում կատարվող աշխատանքներ Հայաստանում գիտական հիմքերի վրա դրվեցին դեռևս անցյալ դարի վերջին երեք տասնամյակներին, երբ Ա. Երիցյանը, Ս. Ուվարովը, ապա Ն. Մառը և ուրիշներ ձեռնարկեցին պեղումներ, Գ. Սրվանձտյանցը, Ս. Հայկունին, ապա Ե. Լալայանը և ուրիշներ նշանակալից աշխատանքներ կատարեցին հայկական բանահյուսության և ազգագրության բնագավառում:

Մինչև սովետական կարգերի հաստատումը Հայաստանում կատարվող հնագիտական աշխատանքների պսակը կազմեցին Անիի պեղումները: Ն. Մառի ձեռնարկած և մեծամեծ ջանքերով իրականացրած այս պեղումներն իրենց ծավալով, տևականությամբ (1892—1893, 1904—1917) և հսկայական արդյունքներով, մինչ սովետական շրջանում եզակի երևույթ էին:

Բանահյուսության բնագավառում բացառիկ նշանակություն ունեցավ «Սասնա ծռեր» հայ ժողովրդական վեպի տարբերակների գրառումը, հայկական հեքիաթների հավաքումը, բառ ու բանի, առասպելների և վիպական երգերի ուսումնասիրությունը, մասնավորապես Մ. Աբեղյանի կողմից: Երաժշտական ֆոլկլորի հավաքման ու մշակման մարզում փայլատակեց Կոմիտասի հանճարը:

Ազգագրական և բանահյուսական նյութերի հավաքման և հրատարակման գործում բացառիկ նշանակություն ունեցավ Ազգագրական ընկերության և նրա օրգանի՝ «Ազգագրական հանդեսի» հիմնադրումը Ե. Լալայանի ջանքերով: